

խաղաղ: Դէպի Ս. Ղազար կատարած ճամբորդութեան նպատակներէն մէկն էր նաեւ ծանօթանալ շարք մը մատենագիրներու գրչագիրներուն, որոնց ուսումնասիրութեան նուիրուած են Հայաստանի բանասէրները, այսպէս Եղիշէի, Փ. Բիւզանդի, Շիրակացիի, Գ. Նարեկացիի, և այլ գրչագիրներու, որ կը գտնուին Ս. Ղազարու Մատենադարանին մէջ: Քննութիւններ կատարեց նաեւ Հայ Թատրոնի պատմութեան վերաբերեալ աղբիւրներու և նիւթերու, վեճակի Մարչիանա գրատան ձեռագիրներուն, գլխաւորապէս «Հոփսիմէ» թատրերգութեան, և Վատիկանի հայ ձեռագիրներու՝ լուսանկարելով զանոնք:

ՀԱՅ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՄԵԾ ԳԱՆՁԱՐԱՆԸ

Այսօրուայ և հետագայ դարերի հայ սերունդները՝ իրենց նախնիների հերոսական անցեալ ու մեծ կուլտուրան ճանաչելու համար՝ շարունակ պէտք է դիմեն մեր ազգային հպարտութիւնը կազմող հին ձեռագրերին:

Ամէն մի հայ երախտագիտութեան զգացումով պէտք է յիշի, որ Սովետական Իշխանութիւնը կործանումից ու բնաջնջումից փրկելով հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը, փրկեց նաեւ մեր անցեալի կուլտուրական սքանչելի ժառանգութիւնը, այդ թւում նաեւ հայկական հին ձեռագրերը:

Սովետական Հայաստանի կառավարութիւնը իր հաստատման առաջին օրերից յատուկ խնամք տարաւ մեր հնագրեան Մատենադարանի պահպանման համար և ծաւալեց մեր ձեռագրերի հաւաքման և ուսումնասիրութեան գործը: 1914 թուի 4660 ձեռագրերի և 1920 թուի վեց հազարի չափ ձեռագրերի համեմատութեամբ Ժողկոմսովետին կից Պետական Մատենադարանի

Փրոֆ. Գէորգ Աբով, բուն և խնամոտ աշխատող մըն է, հմուտ ազգային պատմութեան և մատենագրութեան, կը մաղթենք որ իր գործունէութիւնը միշտ աւելի մեծ և օգտակար արդիւնքներ տայ նկատմամբ նախնեաց մեզի թողած գրական ժառանգութեան ուսումնասիրութիւններու և հրատարակութեան:

Յաջորդ յօդուածը, զոր կ'արտատպենք «Սով. Հայաստան»-էն՝ իր գրութիւնն է, ուր լրիւ տեղեկութիւն կու տայ Հայաստանի կառավարութեան թափած ջանքերուն՝ նըկատմամբ Հայ Ձեռագիրներու պահպանումին, դասաւորումին և ուսումնասիրութեան:

ԽՄԲ.

մէջ այսօր կենտրոնացուած են 9242 հայկական ձեռագրեր, հին ձեռագրերի 3500-ից աւելի պատառիկներ ու պահպանակներ, ինչպէս նաեւ հայ ժողովրդի անցեալին վերաբերող 200,000-ի չափ արխիւային վաւերագրեր:

Եթէ նկատի ունենանք, որ ամբողջ աշխարհի այլ և այլ թանգարաններում գտնուող հայկական հին ձեռագրերի թիւը հասնում է 20,000-ի, ապա միանգամայն պարզ կը լինի, որ Հայաստանի Պետական Ձեռագրատունը պարունակում է այդ ձեռագրերի խոշորագոյն տոկոսը և հայ ժողովրդի կուլտուրական ժառանգութեան մեծագոյն ու անփոխարինելի գանձարանն է:

Մեր Ձեռագրատան դարակներից հայ անցեալի մասին իրենց սքանչելի ոճով անմուռանալի դրուագներ են պատմում Ղազար Փարպեցին, Փաւստոս Բուզանդը, Մովսէս Խորենացին, Ոսկերեբան, Եղիշէն, Ղևոնդ պատմագիրը, Թովմա Արծրունին, Ստեփա-

նոս Օրբէլեանը և բազմաթիւ այլ անմահ պատմագիրներ, որոնց գործերը մեր Մատենադարանում պահպանուած են բազմաթիւ վարիանտներով:

Իրենց հնամենի էջերից այստեղ գիտաշխատողներին մատչելի են դառնում մեր իմաստուն փիլիսոփաներ՝ Եզնիկ Կողբացին, Դաւիթ Անյաղթը, Գրիգոր Մագիստրոսը, Յովհան Որոտնեցին և շատ ուրիշներ:

Մատենադարանում իրենց գործերով նուրից վերակենդանանում են եօթերորդ դարի նշանաւոր մաթեմատիկոս գիտնական Բարսեղացին, մեր միջնադարեան պարծանք Մխիթար Հերացին, Ամիր Գովլաթը, յայտնի են դառնում մեր քիմիայի, բնագիտութեան, աշխարհագրութեան և այլ բնագաւառների վերաբերեալ գիտական աշխատութիւնները:

Մատենադարանի դարակներից իջնում ու նոր թափով հնչում են մեր միջնադարեան նոր բանաստեղծների, տաղերգուների անուշ մեղեդիները, Նարեկացու, Ֆրէկի, Երզնկամեղի, Սաթաբեկի, Քուչակի, Նաղաշի, Գրիգոր-Նոսիսի դիւթական բանաստեղծութիւնները և հինգհարիւր քսանից աւելի այլ թիւնները և հինգհարիւր քսանից ստեղծահայ բանաստեղծների ու երգիչների ստեղծագործութիւնները: Իրենց գունագեղ և ծագործութիւնները փայլում են և հայ զմայելի նկարներով փայլում են և հայ մանրանկարչութեան մեծ վարպետները:

Մեր կուլտուրայի պատմութեան մի անսպառ գանձարան է Մատենադարանը, որի ուսումնասիրութեամբ զբաղւած են Սովետական Հայաստանի գիտնականների աւագ և երիտասարդ սերունդները:

Մատենադարանում պահուող ձեռագրերի ուսումնասիրութիւնը առանձնապէս մեծ դարկ է ստացել վերջին տարիների ընթացքում, երբ կազմուեցին մեր բոլոր ձեռագրերի ու արխիւային վաւերագրերի մանրամասն անոտոցիաներն ու թեմատիկ քարտերը:

Մատենադարան մտնող գիտնականը անմիջապէս կարող է գտնել ոչ միայն բոլոր ձեռագրերի անհատական մանրամասն քարտերը, այլ և ցանկացած հեղինակի կամ

նիւթի վերաբերեալ բոլոր ձեռագրերում գտնուող տուեալները, որոնք քարտագրւած են այրենական կարգով:

Մեր կուլտուրական հարստութեան գիտական սխտեմագիտացիայի այս աշխատանքն ի նկատի ունէր նշանաւոր ակադեմիկոս Տառլէն, որը հետազոտական ուսումնասիրութեան նպատակով այցելելով Մատենադարան՝ այցելուների գրքում գրեց հետեւեալը.

«Անջնջելի տպաւորութիւն է թողնում Հայաստանի Մատենադարանը. դէմ առ դէմ կանգնած ես կուլտուրական պատմական մի ժողովրդի, որը և կլասիկական հնագոյն ժամանակներից մինչեւ այժմ համարել է և հաշուում է կուլտուրական ազգերի առաջին շարքերում: Եւ որքան ուրախալի է, որ ժամանակակից հայ սերունդը այսպիսի սիրով ու խնամքով է վերաբերում իր մեծ անցեալին: Շատ արխիւներ այստեղ կարող էին սովորել այնպիսի խելացի ու լրիւ ցուցակներ կազմել, որպիսին թեկուզ հենց այն ցուցակներն են, որոնցմով Մատենադարանի սիրալիր և գիտնական աշխատողները մի քանի րոպէում ինձ համար գտան շատ արժեքաւոր փաստաթղթեր: Իմ երախտիքն ու շնորհակալութիւնն եմ յայտնում նրանց և հիացմունքս՝ նրանց հիանալի գանձարանի հանդէպ:

Ակադեմիկոս Տառլէ

Երեւան

10 յունիս 1944 թ.»

Սովետական Հայաստան ժամանած Քենտուրբերի եկեղեցու աւագ քահանայ Հիւլիետ Ջոնսոնը և նրան ուղեկցող Օքսֆորդի համալսարանի դոցենտ Ա. Թ. Գայը՝ սոյն թւի Յունիսի 18-ին այցելեցին Հայաստանի Մատենադարանը: Մանրամասն դիտելով Մատենադարանը՝ Հիւլիետ Ջոնսոնը և Ա. Թ. Գայը իրենց տպաւորութիւնների մասին «Այցելուների մատենանում» գրեցին հետեւեալը:

«Խորին հետաքրքրութեամբ ես հետեւեցի

հայերէն ձեռագրերի այս աշխարհաճոյակ Մատենադարանի պայծառ պատմութեանը: Բովանդակ քաղաքակիրթ աշխարհի գիտնականները խորապէս երախտապարտ են Սովետական Միութեանը և հայ գիտնականներին ու պահպանողներին, այն ջերմ հոգատարութեան համար, որ նրանք ունեն համաշխարհային այս գանձի նկատմամբ»: (Քենտրբերիի աւագ երեց Հիւլիոս Զոնտոն):

Իսկ Ա. Թ. Դայը գրել է.

« Մեծ հետաքրքրութիւն էր նայել պատմական վաւերագրերի այս հոյակապ հաւաքածուն, որը բացայայտում է Հայաստանի հինաւուրց կուլտուրան: Նա համաշխարհային կարեւորութիւն է ներկայացնում: Ուրախալի է տեսնել այն խնամքը և գիտական մօտեցումը, որ ցոյց է տրուում նրա նկատմամբ Սովետական Ժամանակներում »: (Ա. Թ. Դայ-Օքսֆորդի համալսարան):

Կաթողիկոսական ընտրութիւնների առթիւ այցելելով Մատենադարանը, մօտիկից ծանօթանալով Մատենադարանի աշխատանքներին և երկու շաբաթի շափ աշխատելով ձեռագրերի ուսումնասիրութեան վրայ, Կիլիկիոյ տանն կաթողիկոս Գարեգին առաջինը գրում է.

« Մեր ազգային ամենամեծ հարստութիւնը, որ ժառանգութիւն ենք ստացել մեր հայրերից՝ Ձեռագրերի ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստութեան ամենամեծ մասը գտնուում է մեր հայրենիքում: Մեր տաս տարուայ բացակայութեան ընթացքում, ոչ միայն ճոխացել է մեծ չափով Պետական Մատենադարանի ժողովածուն, այլ և գիտութեան պահանջների համեմատ ցուցակների մշակումը - ըստ բուն գաղափարների, ըստ հեղինակների թուականների - այսինքն՝ ամենամեծ գիւրութիւն է ստեղծուած գիտական աշխատանքների համար՝ իրենց ուսումնասիրութիւնների նիւթերը հաւաքելու՝ ժամանակի մեծ խնայողութեամբ: Կարգաւորեալ մատենադարաններն ու գրադարանները, թանգարանները

մշակոյթի, արուեստի և գիտութեան զարգացման անհրաժեշտ պայմաններն են: Եւ այդ պայմաններն ստեղծուած են այստեղ ընդարձակ չափերով:

Ուրախութեան զգացմունքով ենք նշում՝ Մատենադարանի աշխատանքների գուրգուրանքը տեսնելով Ձեռագրերի հանդէպ, զեղեցիկ և սիրալիր սպասարկութիւնը հաստատութեան մէջ, որ ոչ պակաս նպաստաւոր հանգամանք է աշխատանքի համար: Երկու շաբաթուայ մեր աշխատանքի արդիւնքը եղաւ կրկնակի, պաշտօնեաների այդպիսի վերաբերմունքի հետեւանքով:

Կը մտղթենք, որ այս հաստատութիւնը ամենայն կերպով ծառայէ հայ մշակոյթի, պատմութեան և հին գրականութեան, արուեստի մշակութեան գործին և աղբիւր հանդիսանայ նոր վերածնութեան և նոր ոսկէ դարի, որ հաւատում եմ, թէ սկսելու է արդէն և մեծ թափով պիտի զարգանայ »:

Վերջին տարիների ընթացքում Մատենադարանի ձեռագրերից օգտուել է իր մեծ ծածաւալ « Հայոց Գրականութեան պատմութիւնը » գրելու, « Հայ Գուսանական երգերի ժողովածուն » հրատարակելու, Կորիւնի « Վարք Մաշտոցի » համեմատական տեքստը կազմելու և այլ հետազոտութիւնների համար մեծ հայագէտ ակադեմիկոս Մանուկ Աբեղեանը: « Հայ միջնադարեան բժշկութեան պատմութեան » վերաբերեալ իր ստուար աշխատութեան և մի շարք գիտական զեկուցումների համար Մատենադարանում պահուող նիւթերն օգտագործել է բժշկապետ ակադեմիկոս Լեւոն Յովհաննիսեանը: Մատենադարանը սպասարկել է նրանց աշխատանքների ընթացքում, մեծանուն ակադեմիկոսներ Յ. Մանանդեանին, Հ. Աճառեանին, Ստեփանոս Մալխասեանին և ուրիշների:

Հայրենական պատերազմի ընթացքում չզրպարեց Մատենադարանում կատարուող գիտա-հետազոտական աշխատանքը:

Հայկական Գիտութիւնների Ակադեմիայի

երիտասարդ գիտաշխատողների կողեկալը գիտութիւնների գոկտոր Երւանդ Տէր-Մինասեանի և պրոֆեսոր Կարոյ Միլիք-Օհանջանեանի ղեկավարութեամբ շարունակում են աշխատանքը հայ միջնադարեան գեղարուեստական արձակ երկերի համահաւաք տեքստեր կազմելու համար, Հայկական Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի գիտաշխատողները ուսումնասիրում են Հայոց պատմութեան առանձին շրջանները, Երեւանի բժշկական գիտական կադրերը վեր են հանում բժշկութեան զանազան բնագաւառներում մեր նախնիների ունեցած նուաճումները:

Առանձնապէս նշելի է այն երիտասարդ գիտական կադրերի աշխատանքը, որոնք քսանհինգ տարիների ընթացքում աճել են Երեւանի համալսարանում և սովետական Գիտութիւնների Ակադեմիային ինստիտուտներում, Համալսարանում, Բժշկական, Մանկավարժական և այլ ինստիտուտներում, Գործների Միութեան և այլ կազմակերպութիւնների մէջ կարգացում են գիտական զեկուցումներ, որոնց նիւթը Մատենադարանում պահուող արժէքներն են կազմում: Ս. Ջալոյեանը, Մ. Մկրեանը և ուրիշներ:

Համարեա բացառապէս Երեւանի Մոլոտովի անուն Համալսարանն ու Սովետական այլ բարձրագոյն դպրոցներն աւարտող երիտասարդ գիտական աշխատողներից է կազմուած Մատենադարանի ամբողջ կոլեկտիվը, որ շարունակում է մեր Ձեռագրատան նիւթերի պահպանման ու մշակման գործը:

Հայրենական պատերազմի ընթացքում Մատենադարանը հրատարակել է մի շարք գիտական հետազոտութիւններ ու տեքստեր, որոնցից անհրաժեշտ է նշել Անանիա Շիրակացու երկերի լրիւ ժողովածուն, Յովհան Մամիկոնեանի « Պատմութիւն Տարօնոյ »-ն, Մատենադարանի « Գիտական նիւթեր » վերնագիրը կրող ընդարձակ ժողովածուն (որի մէջ զետեղուած են բազմաթիւ ուսումնասիրութիւններ ու տեքստեր): Նշանակալից գործ է Մատենադարանի հրատարակութեամբ լոյս տեսած « Կալուածագրերի ժողովածուն », որի մէջ տեղ են գտել Ժ-ԺԸ դարերի Հայաստանի տնտեսական կեանքին վերաբերող բազմաթիւ հետաքրքիր վաւերագրեր: Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ այն հարիւր գեղգրերը, որ հրատարակել է Մատենադարանը հայերէն ու ռուսերէն, և որոնց մէջ մեր միջնադարեան վարպետ նկարիչները պատմում են հազարամեակ ապրող իրենց պայծառ ներկերը պատրաստելու մեթոդները: Քիմիկոս Աշխէն Յարութիւնեանն այդ գեղգրերը ոչ միայն հրատարակման է պատրաստել, այլ և նրանց մէջ նշուած մեթոդներով յաջողել է ստանալ մեր հին ներկերը:

Առանձնապէս մեծ է մեր Մատենադարանից օգտուող գիտաշխատողների հետաքրքրութիւնը՝ գեոեւա չհրատարակուած տեքստերի յայտնաբերման ու նշանաւոր պատմական երկերի համեմատական տեքստերը կազմելու ուղղութեամբ: Եղիշէի Աբարածոց գրքի տեքստը, մեր ժողովրդի պատմութեան խնդիրները, հայ փիլիսոփայութեան պատմութիւնը, միջնադարեան հայ քիմիայի պատմութիւնը և այլ կարեւոր թեմաներ նիւթ են կազմում գիտութիւնների թեկնածուներ Տ. Ղազանջեանի, Գ. Պետրոսեանի, երիտասարդ գիտաշխատողներ Լեւոն Խաչիկեանի և այլոց դիսերտացիաների:

Հայրենական պատերազմի ընթացքում յատկապէս ուժեղացել է հասարակական լայն մասսաների հետաքրքրութիւնը դէպի

